

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԳԻՐ

ՋԱՐԾԱՅԻ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻԻՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 28

“ՏԱՃԱՐ”, Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԻ ԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրու
Գաւառաց համար տարեկան	40 »
Արտասահմանի համար տարեկան	10 ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագիրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Ջարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեչիկթաշ, Հայոց եկեղեցի

در سعادتده بشکطاشده ارمی کلیساشده (داجار) غزتهسی مدیری پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Ջարմարճըլար, Յակոբեան խան

ԽՄԲԱԴՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Ծ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարլեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէզիւրեան

ՎԱՐՁԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւոնդ Ծ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուքիաս Բնյ. Պալլազեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյազեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ծէպէճեան

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՂԻՐԻՍՆՈՒՊՈՒԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ
Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ.—Տ. Ռուբէն Բնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Պողարեան
ԱՅԻՍՆ ԳՐԱՆՆԱԿԱՆ.—Տ. Խաչատուր
Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԴ.—Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բաբգէն Եպսկ.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Տ. Յարութիւն քնյ. Սար-
գիսեան
ԵԴԵՍԻԱ.—Ք. Թիւրաքեան էֆ.
ԵՍՁՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐԶՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ.
Փէրտանճեան
ԶՄԻՒՌՆԻԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ.
Գալուստեան
ԽՍՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ
Ծ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Եպսկ.
Սաւաթիճեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատիւն
ԿԻՒՄԻՒԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշան-
եան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ
Վրդ. Գաապարեան
ՄԱՆՁԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս.
Եպսկ. Իթիւնեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժա-
պետեան

ՄԱՐԶՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիւն
ՆՈՐ ԶՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Բազարատ Վրդ. Վարդապարեան
Շ. ԳՐԱՆՆԱԿԱՆ.—Տ. Նաթան Բնյ.
Տառեան
ՈՒՇԱԲ.—Կարապետ էֆ. Քէհնեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԸՔԷՍԻՐ.—Առաջնորդ Տ.
Կարապետ Եպսկ. Մալլաճեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպսկ. Կէօմքիւքճեան
ՊԱՖՐԱ.—Կարապետ էֆ. Քէրթմէնեան
ՊԱՐՏԻԶԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կա-
րապետեան
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս.
Եպսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒԲ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրճ-
նիկեան
ՌՈՏՏՈՒԹ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թող Ա. Բնյ. Թաղմճեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաշեան
ՍԵԲԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բնյ. Օտապաշեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՖԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնիսիոս Բնյ. Տրէդ-
եան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօվ-
լէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻԶ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառմա-
պետ Բնյ. Քիպարեան
ՔՂԻ.—Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷԶՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 28

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Վերանորոգումիւն Հայ Եկեղեցւոյ, (Դ. Յօդուած, շար.) ՎԱՐԴԱՆ ՔԶ. ԱՍ-
ԼԱՆԵԱՆ.—Անմահութեան ըմպելիւն (Զինական զրոյց), ԳՆԷԼ Ծ. Վ. ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ.—Բառարան
Ս. Դրոց ընտանեացութեան, ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ.—Պատմ. Հայ. Զայնագրութեան, ԱՐԻՍՏ. ՔԶ.
ՀԻՍԱՐԼԵԱՆ.—Սասունցիները Հայկական մէջ, ՄԿՐՏԻԶ ՔԶ. ՄՈՒՐԱՏԵԱՆ.—Նորաստիկ Որբազանները,
ԽՄԲ.—ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՆԻՔԸ, Շաբաթուան լուրեր եւ ժողովոց որոշումներ:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԶՈՐՐՈՐԻ ՅՕԴՈՒԱԾ

Ժամերգութիւն Հայ Եկեղեցւոյ կամ
ԲՅՈՒՆԻՔԻՆ Ժամագրքին

Ը. (*)

2. Աղօթք առ սուրբս.—Գոնէ ես հան-
դիպած չեմ «աղօթք առ սուրբս» բացա-
արութեան ձեւին: Հայոց Եկեղեցւոյ ամէ-
նէն հոյակապ հոգեբոցիւն՝ Դրեգորի Նա-
րեկացւոյ բոլոր աղօթքներուն մէջ իսկ կա-
րելի չէ գտնել այդ խօսքերը: Առ Տիրա-
մայրն ուղղած իր հրաշալի դրուագին մէջ
որ կը սկսի՝ «Եւ արդ ի վերայ այսքան-
եաց. . . աղայեմ զքեզ հրեշտակ ի մարդ-
կանէ, մարմնատեսիլ քերովքէ, երկնաւոր
արքայուհի. . .» եւն. բառերով, և որ ա-

մէնէն ճոխն է զգացումի փափկութեան
տեսակէտով, չկայ աղօթք բառը: Նարե-
կացին որ ամենէն ճոխաբան հեղինակն է,
և «առ Տիրամայրն» դրուագը ուր հայե-
րէնին ամենէն գողտրիկ բառազանձը խտա-
ցած է, կը մոռնան աղօթք բառը նշանա-
կել սուրբերու գերագոյնին հասցէին: Ու-
րեմն բռնաստեղծի պատկերոտ երեւակա-
յութեան ամենալայն ըմբռնումներուն մէջ
իսկ Նարեկացին երբ կը զգուշանայ «աղօթք»
վերադիրը կցելէ, տարօրինակ պարագայ
մը չէ՞ որ Երուսաղէմի տպագիրը բնաւ չէ
անգրադարձած Նարեկացիի գրուածքին
ոգուոյն, ու նշանակած է ցանկին մէջ՝ «Ա-
ղօթք առ Տիրամայրն»:

Արդեօք բարեպաշտ սխալներու և բա-
նաստեղծութիւնը վարդապետութենէ չի
կրնալ զատորոշելու անհասկացողութիւնը
չե՞ն եղած պատճառներ՝ բոլոր օտարամուտ
ընթերցումներուն ու բացատրութիւննե-
րուն, որոնց համար հիմայ պիտի ստիպ-
ուինք խոշոր քանքեր թափել, և ապա-

(*) Շաբ. 26րդ թիւէն:

ցուցանել թէ մեր Նախնիք, որոնց անու-
նով մեզի կը սորվեցնեն շատ մը բաներ,
բնու լուր չեն ունեցած անոնցմէ:

Նարեկացիի երկիւղած հոգիին հակասել
չէ՞ր՝ անոր միայն Աստուծոյ ընծայած պաշ-
տամունքի բառը՝ աղօթք, գործածել նաեւ
արարածի, թէեւ այն ըլլար երանեալ Տի-
րամայրը: «Աղօթք» բառը վերապահուած
է ուրեմն մեր եկեղեցական լեզուի մէջ տո
Աստուած մեր աղաչանքներուն:

3. Կիրակիի նուիրում առ սուրբս.—
Սուրբերու անունով տաճարներ կոչել,
սուրբերու տօն կատարել, աղգին երախ-
տաւոր երեւելի սուրբերու տօնին օրերուն
րացառիկ յարգանք ընծայել, ատոնք Հայ
Եկեղեցիին համար ընդունելի են. նուիրա-
կան են և անխախտ կը մնան:

Ու գեռ կ'ենթադրենք որ Բողոքական
հատուածը իր խոշոր սխալը կը սրբադէր,
իր բարեկարգեալ ըսուած ձեւին անմար-
սելի մէկ օտարամոլութիւնը կը մոռնայ, և
կը վերուշէ ու կը պանծացնէ յայսմանէ
իր պանծալի Նախնիքը և կ'երգէ զանոնք:

Քրիստոսի Տեառն մերոյ Յարութեան
յիշատակին նուիրուած կիրակին կարելի չէ
յատկացնել ո՛ր և իցէ սուրբի: Ատիկայ
սկիզբէն ի վեր Հայ Եկեղեցիի որոշ և ան-
փոփոխելի կարգադրութիւնը եղած է, ան-
կախ քրիստոնեայ տարբեր Եկեղեցիներու
ըմբռնումներէն, ինչ որ բնորոշող մէկ ու-
րիշ մեծ գիծն է Հայ առաքելական Եկե-
ղեցւոյն:

Այդ անփոփոխելի կարգադրութիւնն
ալ ջնջել փորձած են աս ու ան. ուստի
և պէտք է արժեցնել մեր Ս. Եկեղեցիին
այդ պայմանը, և ներս սպրդած անպէտ
յօրինուածութիւնը դուրս հանել: Այդ
կարգին մէջ է՝ 1. Հոգեգալստեան յաջորդ
կիրակիին անուան պիտակաբար կայցուած
«յիշատակ եղիա մարգարէի» բացատրու-
թիւնը: Անկարգ յաւելումներու մթերանոց՝
Կ. Պոլսի տպարաններու քմահաճոյքին ու-
ժովը ներմուծուած է անիկայ Օրացոյցին մէջ,
և կը շարունակուի գրուիլ ամէն տարի, ա-
ռանց նկատելու թէ Տօնացոյցը չի գիտեր
զայն: Եթէ նոյն կիրակի օրուան Ս.
Գրքի ընթերցումին մէջ եղիայի կեանքէն

բաներ մը յիշուած ըլլալուն համար՝ նոյն
կիրակին Եղիական անուանել բանաւոր էր,
ինչո՞ւ ուրիշ կիրակի մը չախտի անուանէինք
Եսայիական և ուրիշ մը Ջափարիական ևն.:

Այդ կարգին մէջ է՝ 2. Տիրամօր Գօտ-
ւոյ և Տփոյ գիւտերուն յատկացած երկու կի-
րակիներու կարգադրութիւնը, զոր տօնա-
ցոյցին մէջ նշանակեց Սիմէոն Կաթողիկոս
1777ին: Կաթողիկոսը բարեպաշտիկ ըմբռ-
նումով մը կ'ուզէր օժտել մեր Եկեղեցին
այդ երկու տօներովը, որոնք պակաս կը
թուէին իրեն: Այն ատեն օտար Եկեղեցի-
ներու այդ առաւելութիւնը զինք կը նե-
ղէր. հիմակ ուրիշ կերպ կը մտածենք:
Բայց այդ ջուխտակ մը տօները երկու կի-
րակիներու պատշաճեցնելու որքան որ
ջանք ըրած էր Հայրապետը, դժուարու-
թեան մը առջև գտած էր ինքզինքը, որ
ուղղակի Հայ Եկեղեցիի հիմնական սկզբ-
բունքէն յառաջ կուգար, և որուն լու-
ծումը չկրնալով գտնել, կարկտան թողու-
ցեր էր իր ըրած տնօրինութիւնը: Հետա-
քքիւր եղող մը անմիջապէս կրնայ ըմ-
բռնել զայն, զի չկայ ուրիշ կիրակի օր
մը, որ «Գիւտ Գօտւոյ» ի և «Գիւտ Տփոյ» ի
օրերուն պէս կողմնացոյցը կորսնցուցած
ըլլայ: «Ս. Աստուած» երգը կը կազմէ մեր
ժամերգութեանց բանային, և տէրունական
Ս. օրին հանգամանքը կը ճշտուի այդ եր-
գէն, որ միօրինակ է. եթէ տէրունին ինչի
է, «որ խաչեցար» կ'երգուի. եթէ Գա-
լլստեան է, «որ եկիր» կ'երգուի. եթէ
Յարութեան է՝ «որ յարեար» կ'երգուի.
Իսկ այդ երկու օրերն են որ կէս մը «խա-
չեցար» կ'երգուին կէս մը «յարեար» (*):

Պէտք է այդ յետնադոյն պատուա-
տունները կրճատել և կիրակին վերածել

(*) Արժ. յօդուածագիրը պզտիկ շուտում մը
ունեցած է: Այդ օրերը Յարութեան նուիրում
կիրակիի հանգամանքով, «Սուրբ Աստուած»ը ա-
ռաւօս, ճաշու եւ երեկոյ «Որ Յարեար» կ'երգուի
միշտ: Տօնացոյցը մասնաւոր պատուէր յունի «Որ
խաչեցար» երգելու: Բայց նկատողութիւնը ճիշդ
է. որովհետեւ միևնույն Ս. Պատարագը, արարողու-
թիւնի, շարական եւն, Աստուածածնի եւն, իսկ ճա-
շուն՝ Յարութեան: Երեկոյեան՝ դարձեալ Աստու-
ածածնի, քաղով Մայր Սուրբ, Համբարձի՝ Նոր
Սիօն, եւն.:

իր նախնական պարզութեան: Անցողակի ըսենք որ այդ տօները բնաւ չեն նմանիր վերափոխման տօնին. վստիքի վերափոխման կիրակին չէ թէ Տիրամօր տօն է, հապա ի պատիւ գալստեան Տեառն է, ուստի և օրուան սուրբ Աստուածն է «որ եկիր ի փոխումն մօր քո և կուսի»:

Այս դիտողութիւններէն դիւրին է կարծեմ եզրակացնել թէ Հայ Եկեղեցին կիրակին չի նուիրեր սրբոց յիշատակին, հապա միայն Տէր Յիսուսի Յարութեան:

4. Պահիկի նուիրում առ սուրբս. — Այս չորրորդ տեսակէտն ալ պէտք է բարդութիւններէ մերկացուի, և Եկեղեցին տեսակէտը ցոլանայ որոշ յայտարարութիւնով: Հայոց Եկեղեցին ի պատիւ Տեառն պահք կը պահէ. ուստի և չէ կանոնած յանուն այս կամ այն սուրբին պահեցողութիւն ընել: Պահքի կարգադրող Ժողովին ամէն ամառը լուսին մէյմէկ շաբաթներ պահք որոշեց: Իսկ շաբաթներու մէջ չորեքշաբթի և ուրբաթ օրերը պահք պահել որոշած է ի պատիւ Տնօրինութեանց Փրկչին: Սուրբի նուիրումը պահեցողութեան գաղափարը ինծի կը թուի թէ Կ. Պոլսի անքօնթիոյ տպարաններէն դուրս եկած է: Անցեալ դարու այդ տպարանները՝ փոխանակ սրբապարիչ անուանելու Պաղտասար դպիրները, աւելի աղճատիչ ըսելու էին: Այդ դպիրապագրիչներու ընկերութիւնը վերջին մէկ երկու դարերու ընթացքին մէջ բարեմտաբար շատ թելադրութիւններու ընդունակ եղեր է, և օտար գործիչներ չա՛տ, բաւականէն ալ աւելի, օգուտ քաղած են այդ ընկերութենէն: Թերեւս անոնք են որ Եղիսկան անուանած են Հոգեգալստեան տօնէն ետք եկող Մայիս ամսուան շաբաթապահքի անունը: Թերեւս, ըսի, վասն զի ինծի կը պակսին հին ձեռագիրներ որպէս զի ճշտէինք մեր ըսածը. մեր ենթադրութիւնը կը հիմնենք ուրիշ տուեալներու վրայ որոնց տեղեակ ենք: Լուսաւորչի անուանած են՝ անշուշտ ի պատիւ քրիստոնէութեան մուտքին սահմանուած Յունիսի շաբաթապահքին անունը: Աստուածամօր անուանած են՝ Օգոստոսի ամսուն շաբաթապահքը որ է ի պատիւ Գալստեան Տեառն:

Ս. Յակոբի անուանած են՝ Դեկտեմբերի ամսուն շաբաթապահքը. իսկ Փետրուարինը որ Առաջաւորաց անունովը նշանաւոր է՝ չեն խղճած անուանել Ս. Սարգսի:

Եւ որովհետեւ պահքը նուիրուած է ի յարգանս Սրբոց Սուրբին՝ մեր նախնիքներու մեզի աւանդած գեղեցիկ կարգ ու սարքին համեմատ պէտք է սրբազրուին տօնացոյցներու և մանաւանդ օրացոյցներու կամայականութիւնները:

5. և 6. Ուղղակի ևս անուղղակի աղայանք առ սուրբս կամ խնդիր բարեխօսութեան. — Այս հինգերորդ ու վեցերորդ տեսակէտները կ'երկարաձգեն մինչև եզր Կաթողիկոսին թուականը, որ Արեւագալի երգերը շարադրած է: Այս ճիւղին մասին, ինչպէս միւս շատ մը պարագաներու մէջ, սրբան նպաստաւոր պիտի ըլլար թարթափիլ հին ձեռագիրներու ուսումնասիրութեան մէջ: Ներկայ Ժամագիրքին ուղղորդ զննութիւնն ալ բաւական լոյս կուտայ մեզի, երբ օգտուիլ ուզենք: Մինչդեռ «բարեխօսութեամբ սրբոց, Տէր, խնայեալ ի մեզ և ողորմեա», «վասն սրբուհոց Աստուածածնին և ամենայն սրբոց զխաղաղութիւն քո տուր մեզ» են. այս ձեւ անուղղակի աղայանքներ առ սուրբս ընդհանուր են՝ մաղթանքներու, շարականներու և աղօթքներու մէջ, որքան ցանցաւ, որքան հազուադէպ են ուղղակի առ սուրբս ձօնուած աղայանքներ, ինչպէս «Մայր սուրբ բարեխօսեա» կամ «բարեխօսեցէք առ Տէր վասն ձեր տօնողացս» են: Ասով Եկեղեցին ընդհանուր գաղափարը կը միտի զօրացնել սոսկաբանքը թէ Հայ Եկեղեցին ուղղակի կը դիմէ Փրկչին, և կ'աղերսէ միայն անոր, որպէս զի բարեխօսութեամբ յաղթական Եկեղեցւոյ կամ թէ աղօթիւք երանեալ սրբոց, նա՛ ինքն իր խաղաղութիւնը մեզի շնորհէ, կամ թէ «բարեխօսութեամբ վերին իր զօրքերուն միշտ անշարժ պահէ Հայկազեան Աթոռը»: Հին շարականներ, մաղթանքներ և երգեր ընդհանուր ձեւը կը սիրեն գործածել, իսկ քանի՛ կը մօտենանք Կիլիկեան դարուն, կը յաճախեն միւս ձեւի գրուածքներ: Ինծի պիտի առարկեն իբրեւ զօրաւոր փաստ միւս

կողմէ թէ «Թովմաս առաքեալ»էն ըսուած խորագիրը կը կրէ «Փառաւորեալ» մաղթանքը, որ Ս. Աստուածին կցուած կ'երգուի: Ես կը դիտէի որ եթէ իրօք այդքան խոր հնութեան գրոշմ կը կրէր այդ մաղթանքը, ինչո՞ւ ուրիշ Եկեղեցիներու մէջ նոյնին հետքը չի տեսնուիր, և ինչո՞ւ մեր Եկեղեցին բոլորովին աղքատ մաս մը յատկացուցած է առ սուրբս ուղղակի աղաչանքի գրուածքներուն, և ճոխ միջերք մը չենք նշմարեր մեր սրբազան գրուածքներուն մէջ այդ մասին: Ինծի կը թուի թէ որոշ կերպով վարանած են մեր Նախնիք այդ հինգերորդ քայլին մէջ, և շատ ցանցառ ու աննշմարելի ըլլալու չափ քիչ գործածած են ուղղակի աղաչանքներ առ սուրբս. իսկ ընդհակառակն առ Աստուած մաղթանքներուն մէջ «սրբոց բարեխօսութեամբ լուր մեզ» ձեւը կարի չատ, գրեթէ միշտ գործածած են. և մանաւանդ բոլոր երանեալ սուրբերու համար ալ Հայ Եկեղեցին, անմասն միւս Եկեղեցիներու, ինք ալ կ'աղօթէ Պատարագին մէջ յառաւելութիւն փառաց նոցա, տեսակ մը փոխադարձ պարտաւորութիւն կատարելով անոնց մեզի համար Աստուծոյ աթոռին առջեւ մատուցած աղաչանքներուն:

Ուրեմն կարելի չէ՞ր աւելի հարազատ և աւելի հայկական ձեւը հռչակել մեր Նախնիքներուն գործածած ընդհանուր ձեւը, և հրաժարիլ ըստ պատահման գործածուած ուղղակի աղաչանքի ձեւէն: Ասիկայ մերձեցման գիծ մը պիտի ըլլար Հայ և Բողոքական ըմբռնումներուն մէջ, քանի որ միւս չորս գիծերը մեզ բոլորովին տարբեր պահեր են ամենէն. Կաթողիկ ըմբռնումէն, որ սուրբերուն կ'երկրպագէ ալ, աղօթք ալ կ'ըսէ, կիրակի ալ կը յատկացնէ, պահք ու ծոմ ալ կը պահէ:

Ուստի վերանորոգիչ ժողովը կրնար ձեռնամուխ ըլլալ և այս կէտին, ու սրբազանքի մասնակի ընթերցումները և այլն: Ասով:

1. Սրբոց ամենուրեքութեան անպաշտ պանկի թեզէն քաշուած կ'ըլլանք:

2. Մեր Նախնեաց ժամերգութեան ընդհանուր ոգւոյն հետեւած կ'ըլլանք, միայն տառը սրբազանքով:

3. Հռչակած կ'ըլլանք թէ հաւատացեալ հոգին ուղղակի և ամեն պարագայի մեջ, աղօթքն ու աղաչանքը կը մատուցանէ առ Աստուած, առանց երբէք կարօտելու մարդկային միջնորդի որ մեր աղօթքը մատուցանէ: Ասով Բողոքականին բողոքի հիման կը դաշնակցի. առանց բողոքական ծայրայեղութեան դիմած ըլլալու:

4. Հաստատուն պահած կ'ըլլանք առ Աստուած մեր աղօթքին մէջ յաղթական Եկեղեցիի աղօթքը, ճանչնալով մեզի բարեխօս ինչ որ պատշաճն է, պաշտպանելին է Ս. Գրքով ու փիլիսոփայութիւնով:

Եզրակացնելով վեց աստիճանաւորումներու մասին մեր խօսքերը, կ'ըսենք. «Փառաւորեալ և օրհնեալ միշտ Սուրբ Կոյս Աստուածածին Մարիամ մայր Գրիտոսի, մատո՛ղ աղաչանս մեր՝ որդւոյ քո և Աստուծոյ մերոյ» մաղթանքը բարեպաշտ զգացումի զեղում մըն է առ Տիրամայրն, բայց՝ ի հակառակէն՝ տեսակ մը վարանք ու տատամսութիւն չենթադրուի օրհնեալ Փրկչին սիրազեղ սրտին ուղղակի դիմելու մեր իրաւունքին ու պարտականութեան:

«Եկէք ինծի, բոլոր աշխատողներ ու բռնաւորուածներ»: Փիլիսոփայ Բաագալը մեզի չի՞ սորվեցներ թէ «Աստուած կենդանեաց ընտանեզոյնն է»: Գթութեան ուղկիանոսն է Փրկիչը, և ուղղակի անոր ակնէն խմել հրաւիրուած ենք ու անոր պիտի դիմենք: Իսկ արդարներու աղօթքին զօրաւոր ըլլալը գիտնալով՝ օգնութիւն պիտի առնենք, ստանանք անոնցմէ:

Ինչո՞ւ Ս. Աստուած երգը Պատարագի մէջ և ուրիշ ատեններ առանձին ալ կ'երգենք, եթէ անհրաժեշտ էր Փառաւորեալի կցումը: Ինչո՞ւ Պլինիոս կը պատմէ ի պատիւ Խաչելոյն երգին երգուիլը, ու յարակից մասը կեցած ըլլալը կը լռէ: Ուրեմն ընդհանուր հայեցակէտին դառնանք, և սրբազանք ժամակարգութեան մէջ ցան ու ցիր գտնուած մասնաւոր այն հատուածները, ուր առ սուրբս ուղղակի աղաչանքներ նշանակուած են:

Թագաւոր յաւիտեաններու 34 հատուածներէն 4ը միայն ունին ուղղակի ձեւը, ուստի միւս 30 հատուածներու անուղղակի

ձեւին նմանցնելու մէջ՝ ինչո՞ւ սխալ մը պիտի ենթադրուէր. կամ առ սուրբս բանաւոր յարգանքի թերացում մը ինչո՞ւ սեպուի մեր ընելիք ձեռնարկը: Եթէ կորուստ մը պիտի պատճառի մեր ըրած այս սրբազրութիւնով, այն պիտի ըլլայ միայն մեր մէջ գտնուող ռամբիկ ու միամիտ համոզմունքներուն, որոնց համեմատ, Սուրբ Սարգիսին կը զիմէր աղօթողը, և ան իր ձին կը հեծնէր և հրազահաա օգնութեան կուգար խնդրողին:

Այդ երազահասի թանձրացեալ գաղափարն է որ պիտի սրբազրուի, և պիտի արմատանայ այն մեծ սկզբունքը թէ հայ հաւատացեալը բժշկութիւն, շնորհ և օգնութիւն միայն Երկնաւոր Հօրմէն, մարդաւոր փրկչէն և ամենազօր Ս. Հոգիէն կը սպասէ, թէ արարածը միայն Արարիչին նախախնամութեանը կ'ապաւինի, և թէ ինչպէս որ Եկեղեցին կ'աղօթէ բոլոր սուրբերու փառքին աւելնալուն, անանկ ալ կը հաւատայ թէ անոնք իրենց կայանին մէջ միշտ կը բարեխօսեն զինուորեալ Եկեղեցւոյ յառաջդիմութեանը համար, և անոնց աղօթքը առաջի Աստուծոյ ընդունելի է: Մինչդեռ եթէ որոշ այս տեսակէտը չընդգրկենք ու տարտղենք ուղղակի ձեւերուն, անպաշտպանելի պիտի մնանք: «Բնական կրօնազիտութիւնը» իսկ կը նշանակէ՝ 1029 էջ՝ «Անոնք լսեն կամ ոչ, փոխադարձ պիտի աղօթեն» ի նման պաշտպանողականներ, որոնք զօրաւոր չեն այժմ և միշտ: (*)

ՎԱՐԴԱՆ ԲՃ. ԱՍԼԱՆՅԱՆ

(Շարունակելի)

(*) Արժ. յօդուածագրին գրութեանց այս շարին կարեւոր տեղ մը կուտանք Ցանաթի մէջ, գլխաւորաբար այն պատճառով որ շուրջ ուսումնասիրութիւն մ'են, Հայ. Ս. Եկեղեցւոյ փառքին եւ պաշտառութեան նուիրում: Իր բոլոր կարծիքներուն մասնակից չենք սակայն: Մեր համոզումը պարզել փորձած ենք՝ անցեալ շարքունի խմբագրականով: Բարեկարգական ներկայ շարժումը պէտք է սահմանափակուի՝ ըստ մեզ՝ եկեղեցականութեան բարձրացման, եւ ամուսնական օրէնքի պատրաստութեան մէջ, որոնք ստիպողական պէտքեր են մեզի, վարժարաններու մէջ կրօնի ուսման բաւաւոր եւ արդիւնաւոր դրութիւն մը յառաջ բերելու աշխատեալ ստիպողական պէտքին հետ մեկտեղ: Ասկի դուրս, դասականական վարդապետական ներքինեանց մէջ խորասուզուիլը շատ հեռունեւը պիտի օսենք զմեզ: Հապճեպով կատարուելիք գործեր չեն ասոնք: Ե. ԽՄԲ.

ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ ԸՄՊԵԼԻՆ

(Զինական գրոյց)

Գրեթէ եօթանասուն տարեկան, հասակաւ միջակ, աշխարհային վայելքներէ հաճոյք մը զգացած ալեւոր ծերուկ մը չէր ուզեր երբեք բաժնուիլ կեանքէն. շատ դառն էր մահն իրեն համար, և երբ կը խորհէր անոր վրայ, կը սարսափէր, կը վախնար յոյժ և կ'ուզէր ճար մը գտնել, ճար մը՝ ապրելու համար, և այն՝ յաւիտենապէս: Այս էր միակ բաղձանքը Գանկ-Ֆօ Մանտառէնի՝ զառամեալ ծերունիին:

Չափազանց մտազբաղութեան մատնուած էր անիկա, վայրկեան մ'իսկ չէր դադրեր անմահութեան վրայ խորհել. իրեն համար ամէն ինչ զայն կը յիշեցնէր, ո'չ հաց և ոչ ջուր էր իր վիտաւածը, ո'չ հարստութիւն և ոչ փառք կամ պատիւ, այլ լոկ հնար մը, այո՛, հնար մը չմոռնելու: Եւ անա՛ այս մտազբաղ ծերուկին օր մը յանկարծական մեծ մխիթարութիւն մը բերաւ իր բարեկամներէն մէկուն այցելութիւնը, որ իրեն հետ երկար ժամանակ կեանակցած էր: Գանկ-Ֆօ տեսնելով իր վաղեմի մտերիմ բարեկամը, անմիջապէս անոր իմացուց իր խորհուրդը, յուսալով թէ օգուտ մը կ'ընդունանք. և արդարեւ նպատակաւոր պատասխան մ'ընդունելով յոյժ ուրախացաւ:

Այդ բարեկամը, նկատի առնելով Գանկ-Ֆոյի մտայնութեան անսովոր վիճակը, կրնամ, կ'ըսէ, հնար մը ցոյց տալ քեզի, բայց պէտք է քիչ մը նեղութիւն յանձն առնուլ և քիչ մ'ալ գրամ չխնայել: Հարիւրամեայ Բոնձու մը կայ, որ կը բնակի Կապոյտ լեռան վրայ և գիտէ անմահութեան ընկալելի մը պատրաստել. սակայն, կը յարէ բարեկամը, այդ Կապոյտ լեռը բաւական հեռու է այստեղէն, գուցէ ճամբուն վրայ նեղութիւններ ալ կրես յառաջացած տարիքիդ բերմամբ, և գիտցած ըլլաս որ այդ Բոնձուն քիչով գոհ չըլլար բնաւ:

Միամիտ ծերուկը, որ կը կարծէր թէ ա՛լ

յաջողած է գտնել անմահութիւնն ձեռք բերելու միջոցը, կը մտադրէ իր ամբողջ հարստութիւնը տալ այդ փափաքած ըմպելիին փոխարէն, և անպատում խնդութեամբ ու մեծ հանդերձանքով ճամբայ կ'ելլէ դէպի Կապոյտ լեռը: Բաւական դժուարութիւններու հանդիպելէ և նեղութիւններ կրելէ յետոյ, ո՛ւր ուրեմն կը հասնի հոն, և անմիջապէս դիմելով Բոնձուին՝ պաղատանօք կ'իմդրէ անկէ անմահութեան ըմպելին: Բոնձուն տեսնելով այդ ծերը, կը սկսի ժպտիլ և կ'ըսէ անոր թէ այդ խրոյրուած ըմպելին պատրաստելու համար պէտք է անկոթուն մասուրսակ մը գտնել և Մեգօնի գետի եզերքէն ցօղի կաթիլ մը բերել իրեն: — Գանկ-Փօ յանձն կ'առնու սիրով այդ դժուարութիւնն ևս, ամէն ճիգ կը թափէ գործադրելու յանձնարարութիւնը, և երկու օր վերջը կը վերադառնայ Բոնձույի մօտ, բերելով միասին անմահութեան երկու տարերքը:

Այն ատեն Բոնձուն զարմանալով ձերուկին միամտութեանը վրայ, իսկոյն կը պատասխանէ թէ այդ մատուտակը՝ զոր ինքը բերած էր՝ անկոթուն մատուտակ մը չէր, այլ կոթէն անջատուած. իսկ ցօղի կաթիլը ճամբան չողիացած էր: Գանկ-Փօ յոյժ տրտմած ու թախծալից՝ սկսաւ մտածել խորապէս, և Բոնձու արգահատելով անոր այդ վիճակին վրայ, ըսաւ յայտնապէս. «Զիմացար, արդարեւ, թէ ի՞նչ ըսել կ'ուզէի քեզի. վայրկեան մ'իսկ մտածութեան առարկայ չըրիր իմ խօսքս. ևս երկու անկարելի բաներ պահանջեցի քեզմէ, փոխանակ ա՛յն անկարելւոյն զոր դու ինձմէ խնդրեցիր: Եթէ իմ այս ուղածներուս վրայ պահ մը խորհէիր, անշուշտ պիտի կարենայիր հասկնալ թէ չկայ հոս երկրի վրայ անմահութիւն: Եթէ դիւրին ըլլար ոտանալ զայն, բոլոր մահկանացունները պիտի ջանային ձեռք բերել և ազատիլ մահուանէ: Ո՛չ, սիրելի Գանկ-Փօ ո՛չ, քանի որ ծնած ենք, պիտի մեռնինք, մահն անխուսափելի է, միայն թէ ոմանց կեանքը երկար և ուրիշներունը կարճ կ'ըլլայ, և զայդ նախախնամութեան միայն պահուած է գիտնալ: Մի՛ վախնար երբեք մահ-

ուանէ, ո՛վ ծեր դու. այսչափ տարիներ բոլորեր ևս և դարձեալ չես ուզեր թողուլ աշխարհը. հապա ի՞նչ պէտք է ընէ այն պատանին որ դեռ քսան գարուններ չտեսած կը բաժնուի ու կ'իջնէ գերեզման: Դու որ հիմա եօթանասուն տարիներ տեսնելու արժանացած ևս, ինչո՞ւ տակաւին չես յօժարիր քու կեանքիդ վերջին վայրկեանն ևս տեսնել, միանգամայն խորհելով թէ արդեօք ո՞րպիսի գործերով անցուցիր այդ երկարատեւ ժամանակամիջոցը, բարիք գործելով թէ չարիք: Պէտք է գիտնալ թէ մարդ չէ թէ երկար ապրելով միայն գովելի կը հանդիսանայ, այլ իր երկարակեցութեան մէջ բարութիւն գործելով և առաքինութեան ճամբէն երբեք չհեռանալով: Ուստի, ո՛վ միամիտդ Գանկ-Փօ, դու որ քու երկրէդ հեռացած ու եկած ևս այսօր անմահութեան ըմպելին գտնելու յուսով, զնա՛, վերադարձիր հայրենիքդ, և հոն մինչև կեանքիդ վերջին վայրկեանն աշխատէ բարիք գործել և երբեք հաւատք մի՛ ընծայեր այնպիսի մարդերու խօսքին, որ անկարելւոյն վրայ կը ճառատեն»:

Խեղճ Գանկ-Փօ՝ բոլոր յոյսերն ի դերեւելած՝ համոզուեցաւ այլ ևս թէ պիտի չըկընայ անմահ ըլլալ, և դարձաւ իր աշխարհը՝ այն տպաւորութեան ներքեւ զոր ներգործեցին իմաստուն Բոնձուի խրատներն և տեսութիւններն:

Գրեց

ԳՆԷԼ Մ. Վ. ԳԱԼԵՄԵԱՐԵԱՆ

ԲԱՌԱՐԱՆ Ս. ԳՐՈՑ ԲՆԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԿԵՆՏԱՆԻՆԵՐ

ՄԵՂՈՒ. — (Սողմ. ՃԺԸ. 12. Ա. Թագ. ԺԴ. 25). Եբր. *Shaynran*. Յուն. *Մեղիսա*. Կ. Բ. *Api melli fica* = (մեղրագործ մեղու):

Թաղանթաթեւերու (hymenoptera) կարգին կը վերաբերի այս միջատը. մե-

ղուները միշտ մեծ բազմութեամբ կ'ապրին, շատ անգամ 15-20,000 և աւելի թուով. այս բազմութիւնը երեք դասակարգի բաժնուած է. առաջին դասը կը կոչուի աշխատաւոր կամ չեզոք. այս խումբը թուական առաւելութեամբ առաջին տեղը կը գրաւէ. երկրորդը քաղուհիներու կամ պարտաւարներու դասակարգն է. երրորդ դասակարգը կը կազմեն արուները:

Աշխատաւոր կամ չեզոք մեղուն ամէնէն փոքրն է մարմնով. թագուհի մեղունին նման թոյնի ասեղ մը ունի որ խայթոց կը կոչուի. այս խայթոցը ծածկուած է որովայնին ծայրին մէջ և կը ծառայէ իբր զէնք թշնամեաց դէմ. խայթոցը շատ զօրաւոր է և չափազանց ցաւ կը պատճառէ. խայթոց մեղուն ինքն ալ կը վնասուի, վանցի խայթոցն այնպիսի ուժգնութեամբ վէրքին մէջ կը մխէ որ չի կրնար հանել դուրս և ասով ինք ալ կ'անշնչանայ:

Արուները աշխատաւոր մեղուններէն մեծ են. մարմինն մոխրագոյն աղուամազերով ծածկուած է. խայթոց չունին. աչքերնին մեծ և բաղադրեալ է:

Թագուհիները արուներէն աւելի մեծ են. թագուհիներու որովայնը երկայնաձեւ է և ծայրը ձու անելու խողովակ մը ունին:

Երկրագունտին ամէն մասերուն վրայ առ հասարակ կը գտնուին մեղունները. հանրածանօթ միջատներէն է. խիստ շատ կը գտնուի մանաւանդ Պաղեստինի և Եգիպտոսի մէջ. մեղունները ոչ միայն ընտանի վայրերու մէջ, այլև վայրի տեղեր անտառներու խորքեր փեթակներ կը շինեն ծառերու փորոքներուն, ինչպէս նաև ժայռերու խորշերուն ու ծերպերուն մէջ: Բաղդ. Բ. Օր. ԼԲ. 13. Գ. Թագ. ԺԴ. 25. Սաղմ. 2. 17. Եսայ. Է. 19: Քանաւ մէջ մեղուններու շատութիւնը հետեւանքն է կլիմային տարբութեան, արգասաբերութեան, և վայրի ծաղիկներու առատութեան ու պէսպիսութեան: Քանանու ծաղիկներու բազմազանութիւնը, խնկահոտ ու անուշահոտ ծաղիկանց բոյրը ու հիւթը պատճառ եղած են պատուական մեղրի առատ արտադրութեան. ասոր հա-

մար է որ Ս. Գիրք յաճախ խոստացեալ երկրին համար կ'ըսէ. «Երկիր մը ուրկէ կաթ և մեղր կը բղխի». (Ելից. Գ. 8, և այլն):

Մեղուններու այլևայլ տեսակները կը ճանչցուին հետեւեալ գիտական անուններով. *Combus, Vomia, Andrena, Osmia* (=որմնադէր մեղու), *Megachile, Anthophora*. այս տեսակները շատ կը գտնուին Պաղեստինի մէջ. մեր տեսած մեղուններուն չի նմանիր Պաղեստինի և Սուրիոյ մեղուն, այլ կը նմանի Իտալականին կամ Լիկուրիականին:

Մեղունները ի հուշ անտի յարգի միջատներ նկատուած են, իրենց մեղրին արժէքին և քաղցրութեան համար: Յիսուսի ժամանակ Հրեայք իբրեւ ընտանի և օգտակար կենդանիներ կը բուծանէին և անով կը պարագլէին: Փիլոն Եսենեանց համար որոշապէս կ'ըսէ թէ անոր մշակութեամբ կ'աշխատէին: Եւսեբիոս, Միշնա այս մասին ակնարկութիւններ ունին: Հին Հրեայք մեղուաբուծութեամբ կը պարագլէին թէ ոչ. որոշ տեղեկութիւն չունինք. Եսայեայ Է. 18 համարը որոշ ակնարկութիւն մը չէ կարելի համարիլ մեղուաբուծութեան:

Մեղուններու փեթակները Սուրիոյ և Եգիպտոսի մէջ գլանաձեւ են և յարդով շաղախուած հողով ծածկուած են: Սուրիոյ մէջ վայրի մեղուններ շատ կան. անոնց խայխուածքը սոսկալի ուռեցք յառաջ կը բերէ և խիստ ցաւ կը պատճառէ. մարդանկարելի է որ կարենայ դիմադրել մեղուաց խումբին յարձակման, և նոյնիսկ տեսնուած է որ ձիեր և կովեր մեռած են մէկ քանի վայրկենի մէջ մեղուններու յարձակումներէն և անոնց տուած խիստ խայթումներէն:

Ս. Գիրքը կը յիշատակէ մեղուն ընդիկ և այլասացիկ իմաստներով:

Բնիկ իմաստով յիշատակուած է Դատ. ԺԴ. 8. Իմաստ. ԺԱ. 3. Առակ 2. 8 համարներու մէջ:

Իսկ այլասացիկ, այսինքն փոխաբերական իմաստով գործածուած է Բ. Օր. Ա.

44. Սաղմ. ձժէ. 12. Եսայ. է. 18 հա-
մարներուն մէջ:

Սամսոնի Առիւծի բերանը պատուելու
պատմութեան մէջ մեղուները հետաքրք-
րական տեղ մը գրաւած են: Ս. Դրքի
պատմութեան համեմատ մեղուները փե-
թակ շինեցին առիւծի պատառուած բերնին
մէջ. այս պատմութիւնը առասպել կը նը-
կատուի կարգ մը մեկնաբաններու կողմէ որք
ինչ ինչ առարկութիւններ կ'ընեն նաեւ
մեղուներու փեթակ շինելու մասին. ստոյգ
է որ մեղուները կը խորշին մուռեալ մար-
միններէ և միշտ խոյս կուտան նեխած
դիակներէ, և բնական է որ սաակած ու
նեխած առիւծէն ալ խոյս պիտի տային, և
անհնարին է երեւակայել թէ այդ, նեխած
մարմնոյն բերնին մէջ փեթակ շինած ըլ-
լային: Պէտք է գիտնալ թէ Արեւելքի
նման տաք երկիրներու մէջ սատկած կեն-
դանիներու մարմինները անմիջապէս կը
տարրալուծուին և կմախք կը դառնան,
կը չորնան սոստկապէս. ասիկա տեսնուած
է Սուրբոյ և Եգիպտոսի անապատներուն
և ճամբաներուն վրայ. ուղտերուն դիակ-
ները արեւուն կիզիչ ճառագայթներուն
տակ անմիջապէս կը չորնան և կմախքի կը
վերածուին. արեւը կ'այրէ անմիջապէս և
չիթողուր որ սատկած կենդանիի մը մար-
մինը նեխի կամ հոտի: Արդ, Սամսոնի
պատառած առիւծին դիակին բերնին մէջ
մեղուները կրնային փեթակ շինել, քանի
որ առիւծին անշնչանալէն քանի մը օր
ետքը բոլորովին կմախք մնացած կրնար
ըլլալ և նեխած դիակ ըլլալէ բոլորովին
դադրած կ'ըլլար: (*)

ՂԵՒՈՆԴ Ծ. Վ. ԴՈՒՐԵԱՆ

(*) Աւելորդ չըլլայ քերես յայտարարել քե Ս.
Դրոց բնասպասմութեան եւ կենդանաբանութեան
վերաբերեալ այս տեղեկութեանց մէջ, մեզի ա-
ռաջնորդ ունեցած ենք Անգղիացի եւ Ֆրանսացի
շաւագոյն հեղինակներու գործերը, որոնց վրայ
աւելցուցած ենք մեր անձնական ուսումնասի-
րութեանց եւ հետազոտութեանց արդիւնքը: Ծ. Յ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԶԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Զ. (*)

Տիգրան Զննահեան. — Երկայացուցած գու-
սաներգութիւններ. — Յովնանեա Աճա-
եան. — Հայկականի ու Եւրոպականի պայ-
քար. — «Արեւելք»ի հրատարակութիւններն
երկուսեւ. — Երաժշտական պայքարի շա-
րունակութիւնը եւ վերջը «Ճերիշէյի Եւր-
գիյե» եւ «Մանգուեկ» օրաթերթերուն
մեջ:

Քնար Հայկականի հրատարակութեանց
մէջ կարեւոր դեր մ'ունեցած էր նաեւ
Տիգրան Զուհաճեան որ ծնաւ 1836ին, Սա-
մեր աղգին մէջ իր հաւասարը չունեցաւ
Եւրոպական երաժշտութեան մէջ ստացած
քաջալարժ հմտութեամբ, և անցեալ
դարու վերջին քսուորդին մէջ (1875—
1898) միջաղգային համբաւ մը ունեցաւ
իր մեծ տաղանդին շնորհիւ, իբր երաժշ-
տապետ, հեղինակ և վարիչ գուսաներգա-
կան խումբերու: Զուհաճեան առաջինն
եղաւ՝ Եւրոպական և արեւելեան երաժշ-
տութիւններն իրարու միացնելով թատե-
րաբեմի վրայ գուսաներգութեամբ ի հան-
դէս ածելու մէջ. կատարեալ ֆուրթըքթոն
մը հռչակուեցաւ Եւրոպացի արուեստա-
գէտներէ, որոնք հիացած էին իր հանճա-
րին և նշանաւոր հեղինակութիւններուն
համար, որոնց գլխաւորներն համարուած
են Արիֆին հիյէտի, Լեպրէպիճի Հօրհօր,
Բօսուէ Բեհեա, Օյիւնիս և Զեմիւրէ:

Տիգրան Զուհաճեան 1870ական թուա-
կաններուն, գործակցութեամբ Եղիազար
Մելիքեանի (որ իր հիացողներէն մին էր),
հիմնեց գուսաներգական առաջին խումբը
իր վարչութեան ներքեւ, և սկսաւ իր
օրէնքներուն շարքը ներկայացնել հետ-
դեմէ Պոլիս և Բերա, և այն աստի-
ճան զնահատուեցան մասնագէտներէ՝ որ
սկսան «Հայ Վէրտի» յորջորջել զինքը:

(*) Շար. 24րդ թիւէ:

Այս գուսաներգակ խմբին առաջին դերակատարներէն մին էր Յովհաննէս Ա. ճէմեան, որ բարեպատեհ առիթ մը համարելով իրեն՝ Քրիստափոր Քարա-Մուրզայի հեղինակած քառաձայն պատարագին Ս. էջմիածնայ տաճարին մէջ մուտ գըտնելը և Մկրտիչ Ա. Կաթողիկոսէն ընդունելութեան արժանանալը, սկսաւ խել մը յօգուածներ գրել 1893ին Արեւելք լրագրոյ մէջ, որոյ աշխատակիցն էր իբր թատերական քննադատ:

Աճէմեան իր այդ յօդուածներուն մէջ կը պնդէր թէ առանց եւր. երաժշտութեան կարելի չէ բարեփոխութիւններ մըտցնել մեր եկեղեց. երգեցողութեան մէջ, որոնք ո՛րչափ ալ լաւագոյն կերպով հեղինակուած ըլլան՝ ախորժալուր չեն կրնար ըլլալ, մինչեւ որ եւրոպական ձայնադրութիւնը նորա մէջ հարկ եղած կանոնադրութիւնը չենթմուծէ... ևն.:

Իբր նախանձախնդիր Հայ Զայնագրութեան արդարացի ջատագովման, անհամբերութեամբ կը սպասէի որ կարողագոյն գրիչներ հարկ եղած պատասխանը տան յօդուածագիր Աճէմեանի, որ բնաւ զազափար չունենալով Հայկականի մը գոյութեան, փառաց ի փառս կը բարձրացնէր եւր. երաժշտութիւնը՝ մի առ մի թուելով անոր հրաշալիքները: Դժբախտաբար բաւական ատեններ այս յոյսս ի դերեւելաւ, և հուսկ յետոյ տեսնելով որ ո՛չ ոք կը պատասխանէ այդ յօդուածներուն, ամէն նկատողութիւն մէկ կողմ թողլով հրապարակ նետուեցայ՝ գէ՛թ ապացուցանելու համար Համբարձումեան ձայնադրութեան մը գոյութիւնը, որո՛վ միայն կարելի էր կանոնադրութիւն մտցնել մեր այժմեան աղաւաղեալ երգեցողութեանց մէջ:

Առաջին յօդուածս երեւցաւ Արեւելքի 2955 թիւին մէջ: Հիացում յայտնելով հանդերձ եւրոպական նշանաւոր հեղինակներու, Մօցարթի, Ռօսինիի, Մէյէրպէր, Կոլնօի ևն. մեծանշակ գործերուն, յիշեցուցած ենք մեր եկեղեցական երգերումսին ալ եւրոպացի շատ նշանաւոր արուեստագէտներու կողմէ յայտնուած հիա-

ցումը, և եզրակացուցած թէ հարկ չկայ թողուլ մեր ունեցածը և ընդունիլ օտարինը. միայն թէ համամտութիւն յայտնած ենք որ կարգ ու կանոն պէտք է մտցնել հայ եկեղեց. երգեցողութեանց մէջ, քանի որ ամէն փափաքող դպիր է և ամէն երգիչ իր ուշած կերպով կ'երգէ: Ցուցուցած ենք նաև որ Արեւելեան Զայնագրութիւնը՝ բաց ի կիսաձայներէ, ունի նաև շաւրի և նոյն իսկ կիս-շաւրի ըսուած ձայները, ինչ որ առաւելութիւն մըն է եւրոպականին վրայ:

Յովհ. Աճէմեան Արեւելքի 2960 թիւին մէջ հրատարակուած յօդուածով մը պատասխանեց ինձ, պնդելով միշտ թէ արեւելեան երաժշտութիւնը որչափ ալ լաւ երգուի, ախորժալուր չէ, և կրկնելով իր նախորդ առարկութիւնները Հայ Երաժշտութեան և Հայ Զայնագրութեան, նաև հայ դպիրներուն դէմ:

Հինգ օր վերջը նոր պատասխան մեր կողմէ, դարձեալ Արեւելքի մէջ, որով կը հաստատէինք թէ ընդդիմախօսս եթէ քիչ մը ծանօթութիւն ունեցած ըլլար Համբարձումեան ձայնագրութեան, պիտի գընահատէր անշուշտ Հայու մը մտքին ծրնունը եղող այս գիւտը, որ լիովին կը համապատասխանէ Արեւելեան և մանաւանդ մեր եկեղեցական երաժշտութեան:

Արեւելքի վարչութիւնը, որպէսզի իր աշխատակիցը յաղթահարուած չըլլար, վերջին խօսքն անոր պիտի տար բնականաբար: Ուստի Աճէմեան իր վերջին խօսքն հրատարակեց նոյն թերթին 2869 թուով, պնդելով որ բարեփոխման, յառաջդիմութեան փափաքող պէտք է ըլլալ միշտ, և եզրակացնելով թէ քանի որ կատարեալ ձայնագրութեան մը գոյութիւնը կ'աւետեն, պէտք է որ եկեղեց. երաժշտութեան բարեփոխումը կատարուած ըլլար ցարդ:

Արեւելք պատասխանս չուզեց հրատարակել, ուստի պարտաւորեցայ Մանգումեի մէջ տպել զայն, անհրաժեշտ բացատրութիւնները տալով, և աւելցնելով թէ քանի որ գրաւոր կերպով լաւ չեն բացատրուիր արուեստին նրբութիւնները, կրնանք

դէմ առ դէմ գալ և գաղափարներու փոխանակութեամբ իրար համոզել :

Այդ վերջին պատասխանէն առաջ ձեռիսէի Շարգիյի մէջ Աւետիս Թ. Կէզիւրեան (այժմ Տաճարի տնօրէն խմբագիր Տ. Զարմայր քհնյ.) ևս ընդարձակ յօդուածով մը կը պաշտպանէր հայ եկեղեց. երաժշտութեան առաւելութիւնները, սնորհալուն սրտին ու հոգիին անբաժան մասն ըլլալը, և Արեւելեան Երաժշտութեան գեղեցկութիւնները, Արեւելեան ձայնաստիճանին աւելի՛ կատարեալ ըլլալը և վերջապէս Արեւելքցիներու մեծամասնութեան համար Արեւմտեան Երաժշտութեան անհասկնալի ըլլալը ևն. , որուն պատասխանեց Յովհ. Աճէմեան նոյն թերթին մէջ, ինձ տուած պատասխանները կրկնելով: Աւետիս Կէզիւրեան վերջաբանով մը պատասխանեց, և սակայն ինդիւրն փնդոյծ մնաց լրագրական հրապարակի վրայ, և մասնաւոր տեսակցութեան մեր հրաւերին ալ չպատասխանուեցաւ, և Աճէմեանի ու և է մէկ պատասխանը չերեւաց թերթերու մէջ, թերեւս ընելիք առարկութիւններն սպառած ըլլալով այլևս: (*)

ԱՐԻՍՏԱԿԵՍ ՔԷ. ՀԻՍԱՐԷԱՆ

(Շարունակելի)

(*) Թողութեամբ Արժ. Տ. Արիստակէս Բհ. խմբագրութեան ղրկած Ե պատճենները հանգ. Յովհ. Աճէմեանի, եւ իրեն (այն ատեն Վրթակէս Հիսարեան) Արեւելքի մէջ թեր ու դիմ գրած յօդուածներուն, նաեւ թերթի տնօրէն-խմբագրին (այն ատեն Աւետիս Կէզիւրեան) ձեռքիս Շարգիյի մէջ ի պաշտպանութիւն հայ եկեղեց. երաժշտութեան եւ հայ ձայնագրութեան գրած յօդուածներուն: Ենտեղացիներուն յայտնելով հանդերձ տարած երկարագիւղի աշխատութեան համար, դժբախտաբար տեղւոյ անձկութեան պատճառով չկրցանք այդ յօդուածներն ամբողջովին արտասանել, եւ ասոնց համար ևս մէկ անգամ անհաշտ լրագրագետներ: Եթէ հին ժամանակներու մէջ հայ եկեղեց. երաժշտութեան վրայ քոյր գրուածներն արագրել հարկ չլիար, Ծանարի սուղ եղեր չպիտի բաւէին: Մնաց որ այդպիսի արտասանում մը ընելու պարագային իսկ, ժամանակի եւ կարողութեան սեպակեով ասոնցմէ առաջ հարկ երեւանաւորեալ ծանօթացնել Արիստակէսի Յովհաննէսեանի, Եղիա Տէսեւեանի, Թաշեւեանի եւն. օրով հանգ. Սո. Փափագեանի մասնակցութեամբ, Երուսաղէմի Սիոնի եւ ընդ թերթերու մէջ. հրատարակելու:

ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԸ

ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Տեղւոյս հայ հասարակութեան, եթէ ոչ հարուստ, գէթ չարաչար աշխատութեանց տոկացող մէկ մասն ալ Սասունցիները կը կազմեն: Ասոնք շատ հին ժամանակներէ ի վեր, գլխաւորաբար Հաճիտեան բռնակալութեան օրով, սկսած են գունդագունդ պանդխտիլ Հալէպ, ուր ընդհանրապէս կը պարսպին հացագործութեամբ ու ջաղացպանութեամբ:

Ենթադրական հաշուով, այսօր Հալէպի մէջ և իր չըջակայքը գտնուող Սասունցի աշխատաւորաց թիւը 4000ի կը հասնի: Սակայն ցաւալի է ըսել թէ այսքան ստուարաթիւ համայնքի մը մէջ չէ կարելի գտնել մէկ տնուոր և կամ մէկ պանդուխտ, որ ունենայ բարեկեցիկ վիճակ. ընդհակառակն ամէնքն ալ աղքատ, թշուառ մարդիկ են:

Այս անտանելի կացութեան ու աղքատութեան գլխաւոր պատճառը իրենց տգէտ ըլլալու դժբախտութիւնն է: Ասոնց հարիւրն հարիւրը կարգաւ գրել չգիտնալէ զատ, վերջին ծայր հին գլուխ և նախապաշարեալ մարդիկ են: Երկրորդ պատճառը պէտք է վերագրել իրենց իրարու նկատմամբ ունեցած քստմեկի ռիսակալութեան և խենչ ընթացքին, որուն հետեւանօք ոչ միայն իրենց տաժանելի կեանքի երկար տարիներու ծանր աշխատութեանց արդար վաստակը յումպէտս կը վատնեն զինեւանց և սրճարանաց մէջ, այլ և աղտոտ փուռերու և ջաղացքներու գետնափոր նըկուղներու տամուկ անկիւնները կեանք վարելով, տարածամ կը զառամին, ու կը կորսնցնեն իրենց հայրենիքէն բերած առողջական վիճակին վայելուչ կազմուածքը

բակուած տեսութիւններն ու վիճաբանութիւններ, որոնք այդպիսի շահեկան պիտի ըլլային: Ինչիտն այն է որ հայ երաժշտներու ընդհ. անտարբերութեան մէջեղ, երաժշտութեան քոյրովին տարբեր գրադումի տէր երկու հոգիներ՝ եռանդը կ'ունենան իրենց կարողութիւնն ի սպաս դնել հայ եկեղեց. երաժշտութեան եւ անոր հոգեզմայր շարականներուն պաշտպանութեան: Ծ. ԽՄԲ.

և խրոխտ բնաւորութեան գեղեցիկ յատկութիւնները :

Այսպէս, Սասունցիներու մահուան տարիքին միջին թիւը, ըստ տեղւոյս Ազգ. վարձանմանց տօմարին, 27էն անդին չանցնիր: Ընդհանուր առմամբ դեռ երիտասարդական տարիքի գարունները չաւարտած՝ ծաղիկ հասակին մէջ կ'իջնեն սու գերեզման, յաւիտենական քունով քնանալու :

Սասունցիները, ինչպէս հոս, նոյնպէս իրենց բուն հայրենիքին մէջ ալ շատ խեղճ ու կրակ մարդիկ են: Իրենց թէ՛ նիւթական և թէ՛ մտաւորական կացութիւնը բնաւ միմիջարական չէ, ու նախանձելի դառնալէ շատ հեռի: Դպրոց չունին, կարողութիւն չունին, առաջնորդ չունին. և այս պատճառներով քաղաքիս հայ հասարակութեան կարեւոր մէկ մասը կազմելով հոն դերձ, չեն կրցած նախանձելի դիրքի մը տիրանալ, նոյն իսկ Ազգ. շրջանակներու մէջ: Այժմեան եւրոպականացած Հայէսի պէս քաղաքի մը մէջ ապրելով հանդերձ, դեռ չեն փոխած իրենց նահապետական կեանքի պարզութիւնը, հագուստն ու կապուստը, որուն համար ստէպ մատնանիչ եղած են տեղւոյս հասարակութեան կողմէ՝ իբր տոհմային բնորոշ յատկութիւնը իր վրայ մարմնացնող մի հնադարեան ժողովուրդ, որ կարծես թէ սահմանուած է մի միայն տանջուելու և կեղեքուելու, դառնութեան բաժակը ցմրուր ըմպելու համար:

Այս առթիւ, իբրեւ Սասունցի, թող ներուռի ինծի ըսելու թէ Սասնոյ Փսանաց գաւառի 20-25 կտոր հայ գիւղերը բոլորովին անտեսուած անկիւն մը եղած են Ազգ. Պատրիարքարանի հոգատար աչքին:

Թուրքիոյ լուսաբեր սահմանադրութեան հռչակումէն ի վեր, դժբախտաբար ո՛չ տեսնուեցաւ և ո՛չ ալ կարգացուեցաւ Ազգ. ու է թերթի մէջ որ Պատրիարքարանը իր զբաղումին առարկայ ըրած ըլլայ վերոյիշեալ հայաշատ գաւառի դժբախտ ժողովրդի նիւթական և բարոյական վիճակը, որ ի սպառ քայքայուած է և տակաւ դէպի կորստեան անդունդը կը դահալիթի:

Ուստի, խոնարհաբար Ս. Պատրիարք

Հօր ուշադրութեանը յանձնելով այս կարեւոր կէտը, Սասնոյ Փսանաց գաւառի նիւթական և կրթական խնդիրը, կը խնդրուի որ այս մասին պարտն ու պատշաճը հաճի տնօրինել օր առաջ:

Հալէպ,

ՄԿՐՏԻՁ ՔԶ. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՆՈՐԱՊՍԱԿ ՍՐԲԱԶԱՆՆԵՐԸ

Տ. ԴԱՆԻԷԼ ԵՊԻՍԿ. ՅԱԿՈԲԵԱՆ

Ծնած է Կ. Պոլսոյ մէջ 1865ին: Երուսաղէմի միաբանութեան մէջ մտած, և վարդապետ ձեռնադրուած է 1889ին 1896ին, Երուսաղէմի Ս. Պատրիարքին և միաբանութեան հաւանութեամբ և Ազգ. Կեդր. Վարչութեան հրաւերով կոչուեցաւ Երզնկայի առաջն. տեղապահութեան պաշտօնին, զոր վարեց ընդհանուր գոհունակութիւն պատճառելով ժողովրդեան, և քիչ ժամանակ ետքը Վիճակին առաջնորդ ընտրուեցաւ: Ութ տարիի չափ Երզնկա մնալէ ետքը, իբրեւ տեղապահ և իբր առաջնորդ, 1904ին Կ. Պոլիս եկաւ, ուր իր հրաժարականը մատուցեց Երզնկայի առաջնորդութենէն, և քիչ ժամանակ ետքը Իզմիր զրկուեցաւ իբրեւ Պատր. Փոխանորդ, ուր առօրեայ գործերու յանձնաձումէն ետքը, յաջողեցաւ Առաջնորդի ընտրութիւն կատարել յանձին Ամեն. Դուրեան Սրբազանի, այն ատեն Փոխ. Վանահայր Արմաշու: Միևնոյն ատեն ինքը՝ Տ. Դանիէլ Ծ. Վ. ևս առաջնորդ ընտրուեցաւ Ազգ. Պոլսոյ, 1905ի վերջերը, ուր պաշտօնավարեց 4 տարիի չափ, թեմականաց ընդհանուր համակրութիւնը չահելով. այն աստիճան որ երբ անցեալ տարի Ազգ. Կեդր. Վարչութիւնը Երուսաղէմի Պատր. տեղապահութեան կոչեց զինքը, Ազգ. Պոլսեցիք բողոքի հռչակիրներ քաշեցին, չուղելով զրկուել իրենց սիրելի առաջնորդէն: Տ. Դանիէլ Եպիսկ. գնահատուած է իր առաջնորդական և տեղապահական պաշտօններուն մէջ, և ցուցուցած է վարչական կարողութիւն. քայքայ առաւելապէս համակրելի եղած է Հայ

եկեղեցականի մաքուր և անբասիր կեանքով: Ադր. Պոլսոյ Գաւառ. Վարչութիւնը Եպիսկոպոսական վկայական տուած էր իրեն, բայց իբրեւ Երուսաղէմի միաբան, նոյն միաբանութենէն ալ վկայագիր հարկ էր. այսու հանդերձ Երուսաղէմի գործերու խառնակ վիճակին պատճառով, բաւական սեպուեցաւ Ազգային Կեդր. վարչութեան կողմէ տրուած վկայագիրը:

* *

Տ. ԶԱԽԷՆ ԵՊԻՍԿ. ՏԵՐ ԵՂԻԱԵԱՆ

Բնիկ Պաղտատցի, ծնած է 1869ին: Դպրեմանքի աշակերտելով վարդապետութեան ձեռնադրութիւն ստացած է 1895ին, մէկն ըլլալով առաջին շրջանի եօթը աշակերտներէն: Իր շրջանաւարտի թիւը եղած է ուսումնասիրութիւն մը Յովհան Օճնեցիի վրայ: Ինչ յետոյ Դպրեմանքէն Պոլիս գալով քարոզիչ կարգուեցաւ Խասգիւղի և միեւնոյն ատեն անձնական քարտուղար օրուան Պատրիարք Օրմանեան Սրբազանի: 1898ին Ազգ. Վարչութեան կողմէ իբրեւ Առաջն. Տեղապահ զրկուեցաւ Կարին, որուն առաջնորդ ընտրուեցաւ 1901ին: Հինգ տարիի չափ ալ իբրեւ առաջնորդ պաշտօնավարելէ ետքը ի Կարին, ուր ունեցաւ իր համակիրները և քննադատները միանգամայն, 1906ին եկաւ Կ. Պոլիս, և մնաց երկու տարիի չափ, քարոզչութեան պաշտօններ վարելով Եէնի գիւղ, Սամաթիա և Մաքրիգիւղ: 1908ի առաջին կիսուն Ազգ. Վարչութեան կողմէ իբրեւ Պատր. Փոխանորդ զրկուեցաւ Վան, ուր ազատութեան հռչակումէն յետոյ բաւական ընդհարումներ ունեցաւ տեղւոյն կուսակցականներուն հետ, և հալիւ տարի մը հոն մնալէն յետոյ Տիարպէքիցիները առաջնորդ ընտրեցին զինքը և 1909ին նոյն պաշտօնով փոխադրուեցաւ Տիարպէքի: Եպիսկոպոսական վկայագիր ստացած էր թէ՛ Կարինէն և թէ՛ Տիարպէքիէն:

* *

Տ. ՍՄԲԱՏ ԵՊԻՍԿ. ՍԱՍՏԵՅԵԱՆ

Ատաբաղարի մէջ ծնած է 1871ին, և և Դպրեմանքի աշակերտելով վարդապետ-

տութիւն ստացած է 1895ին առաջին, շրջանի միւս վեց վարդապետներուն հետ: Իր թիւը եղած է Ներսէս Լամբրոնացի: Պոլիս գալով՝ երեք տարիի չափ նախ Պալատի յետոյ Կէտիկ Փաշայի մէջ քարոզչութիւն վարելէ ետքը, 1898ին Ազգ. Վարչութեան կողմէ իբրեւ առաջն. տեղապահ Շապին Գարահիսար զրկուած է, ուր իր շրջանայեաց և խոհեմ պաշտօնավարութեամբ ընդհանուր համակրութիւն չահելով, քիչ ժամանակ յետոյ առաջնորդ ընտրուած է նոյն վիճակին: Ինը տարիի չափ Շապին Գարահիսարի մէջ պաշտօնավարելէ ետքը, Կարնեցիները Տ. Զաւէն Մ. Վ. Ի հրաժարումին վրայ առաջնորդ ընտրեցին զինքը Կարնոյ, և Սմբատ Եպիսկ. նախընտրեց այն պաշտօնը Շապին Գարահիսարի առաջնորդութենէն, ինչ որ միակ դժգոհութեան չարժաւորելի եղաւ Շ. Գարահիսարցիներու, որ չէին ուզեր բաժնուիլ իրենց բանիմաց առաջնորդէն: Եպիսկոպոսական վկայական ստացած էր թէ՛ Շ. Գարահիսարէն և թէ՛ Կարնէն:

* *

Տ. ԹՈՐԳՈՍ ԵՊԻՍԿ. ԳՈՒԵԱԿԵԱՆ

Բնիկ Պարտիզակցի, ծնած է 1874ին, և վարդապետութեան աստիճանն ստացած է 1896ին, շրջանաւարտն ըլլալով երկրորդ շրջանի վարդապետներուն: Ամեն. Դուրեան Սրբազանի Արմաշի վանահայրութեան միջոցին ներքին տեսուչ անուանուեցաւ Դպրեմանուց: Յետոյ, Ն. Սրբազանութեան Զմիւռնիոյ առաջնորդութեան կոչուելուն վրայ, փոխ վանահայր անուանուեցաւ Արմաշու. այնպէս որ երբ 1907ին ընտրուեցաւ Սեբաստիոյ առաջնորդ, Դպրեմանքի շրջափակէն դուրս ո եւ է վարչական պաշտօն վարած չէր: Հակառակ ասոր, Տ. Թորգոմ եպիսկ. շրջանայեաց գործունէութիւն մ'ունեցաւ իբրեւ առաջնորդ Սեբաստիոյ, և կրցաւ բաւական համակրութիւն չահիլ Սեբաստացիներու կողմէ, որոնց իրենց առաջնորդին եպիսկոպոսական վկայագիր տալու մասին ցուցուցած վարանումը յառաջ կուգար առաւելապէս այն կասկածէն թէ չպիտի ուզէ մնալ Սեբաստիոյ մէջ մինչեւ վերջը:

Տ. Թորգոմ Եպիսկ. որուն վարդապետական թեզը եղած է «Գրիգոր Մագիստրոս», մէկը եղած է Դպրեմանքի ամէնէն աւելի հասուն մտքի տէր վարդապետներէն, և թէև գրական հրապարակի վրայ չատ չերեւար, բայց իր հազուադէպ գրութիւնները հաճոյքով և օգտիւ կը կարդացուին:

*
*
*

Տ. ՍՏԵՓԱՆ ԵՊԻՍԿ. ԱՂԱՋԱՏԵԱՆ

Միաբան եղած է Լիմ անապատին: Ծնած է 1852ին եւ վարդապետ ձեռնադրուած 1876ին: Առաջնորդական տեղապահութիւնը վարած է Վանայ, եւ այժմ Վանահայրն է Կտուց անապատի:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

Ս. ՊԱՏՐԻԱՐԷ ՀՕՐ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՊՈՒԼԿԱՐԱՑ ԵԿԶԱՐԷՐՆ

Ս. Պատրիարքը ընկերակցութեամբ Պատր. փոխանորդ Տ. Ղեւոնդ Մ. Վ. Դուրեանի, Շր. օր Պուլկարաց Եկզարքարանը գնաց, ուր դուռնէն ընդունուեցաւ սարկաւազներու և Եկզարքի փոխանորդին կողմէ: Դանլիճին դրան առջեւ Եկզարքը դիմաւորեց երկու եպիսկոպոսներով Ն. Սրբապետութիւնը, և երկու հոգեւոր պետերը ողջագութեան: Հիւրերը յետոյ առաջնորդութեան Դանլիճ, և Եկզարքը Ս. Պատրիարքին ներկայացուց իր հետեւորդները: Բարի գալուստի արարողութիւններէն ետք, Ս. Պատրիարքը Սօֆիայի եկեղեցոյն Պուլկար կառավարութեան կողմէ գնուելուն մասին խօսք բացաւ, և ըսաւ թէ կարելի չէ՝ այդ տեսակ պատմական շէնք մը չփլցնել, քանի որ պուլկար պատմութեան հետ սերտ առնչութիւն ունի այդ եկեղեցին ալ, և կրնար մնալ իբր յիշատակարան մը. և խնդրեց որ գոնէ նոր շինուելիք եկեղեցի մասին յարմար վայր մը յատկացուի, և Սօֆիայի Թաղ. Խորհուրդին խնդրած գինը տրուի

կառավարութեան կողմէ: Եկզարքը պատասխանեց թէ ոչ միայն Հայոց եկեղեցին, այլ եւ անոր չափ պատմական հնութիւն ունեցող և անոր մօտ գտնուող մզկիթն ու Պուլկարաց եկեղեցին եւ պիտի փլցուին, որոնց տեղ պիտի շինուի աստուածաբանական վարժարանի մը շէնքը, եւ խոստացաւ ամէն կարելի միջոց ի գործ դնել Հայոց պահանջած գնոյն կառավարութեան կողմէ վճարուելուն մասին:

Սոսակցութիւնը յետոյ դարձաւ Պուլկարիա գտնուող Հայութեան վրայ: Եկզարքը հարցուց թէ Հայերը ո՞ր թուականին գաղթած են Պուլկարիա, Ս. Պատրիարքը պատմականը ըրաւ Պուլկարահայերու Պուլկարիա գաղթելուն, եւ ըսաւ թէ Հայերը տաճարորդ դարէն ի վեր գաղթած են Պուլկարիա, եւ հին մատենագրութիւններէն մէջբերումներ ընելէ վերջ, թուեց Պուլկարներուն 1895ի դէպքերուն Հայոց ըրած բարիքները, եւ չնորհակալութիւն յայտնեց Պուլկար մարդասէր ազգին: Ն. Սրբապետութիւնը յետոյ Ռումանիա, Լեհաստան եւ Ամերիկա գրանուող Հայոց արդի եւ անցեալ վիճակին մասին խիստ գեղեցիկ տեսութիւններ ըրաւ, զորս Եկզարքը մեծ ուշադրութեամբ մտիկ ըրաւ, եւ ըսաւ թէ Հայ ազգը իբր գործունեայ եւ յառաջդիմասէր ազգ՝ իր գաղթած վայրերուն մէջ միշտ յարգուած և սիրուած է: Սոսակցութիւնը յետոյ դարձաւ իլմուխապէրներու խնդրոյն վրայ: Ս. Պատրիարքը հարցուց թէ այս մասին Եկզարքարան ու է պաշտօնաթուղթ եկած է կառավարութեան կողմէ: Եկզարքը ժխտական պատասխան տուաւ, և խնդրեց որ երկու Պատրիարքարանները միաձայնութեամբ գործեն: Յետոյ կրթական խնդրին անցան: Ս. Պատրիարքը մինչեւ հիմա իր ըրած դիմումները քացատրեց և յոյս յայտնեց որ այս խնդրին ալ համաձայնութեամբ պիտի կարգադրուի: Ն. Սրբապետութիւնը յետոյ հրաժեշտ առնելով մնկնեցաւ:

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ. — Ս Պատրիարք
Հօր հաղորդած տեղեկութեանց վրայ թէ

կրթական նախարար Էմիլուլլահ պէյ հա՛մակերպութիւն կը յայտնէ Պոլսոյ մէջ Պատրիարքը և գաւառներու մէջ Առաջնորդները պատասխանատու նկատելու Ազգային վարժարաններուն, իսկոն ժողովն անցեալ շաբթու որոշեց այդ մտօք թագաւոր մ'ալ տալ, խնդրոյն պաշտօնական հանգամանք տրուելու համար, և այս նըպատակաւ Կրթ. նախարարութենէն խնդրուած հարցարանը պատրաստելով յանձնել Մէարիֆին: Ատոր մէջ Ս. Պատրիարքը տնօրէն պիտի նշանակուի բոլոր ազգ. վարժարանաց. եթէ Մէարիֆը դիտողութիւն ընէ, պիտի հասկցուի որ գործը մեր ըմբռնած ձեւով չէ: Ժողովը ինկատ առաւ նաև թուրք թերթերու մէջ հրատարակուած պաշտօնական գեկոյցը, որով դպրոցներու տնօրէններն և ուսուցիչներն ուղղակի պատասխանատու կը նկատուէին: Սակայն դիտուեցաւ որ այդ շրջաբերականը օրեր առաջ պատրաստուած էր, և Ազգ. Պատրիարքարանին հաղորդուած չէր պաշտօնապէս: Ամէն պարագայի մէջ նախարարական վերջին յայտարարութիւնը հիմ կը բռնուի Պատրիարքարանի բանակցութեանց: Ազգ. Վարչութիւնը կը փափաքի կրթական խնդիրը կարգադրել, որպէս զի կարելի ըլլայ Մէարիֆի անտուկէն ազգին բաժինն ալ ստանալ, և մասնաւորապէս մարդորութեան առարկայ դարձած Կիլիկեան քանի մը թեմերու մէջ նախակրթարաններ բանալ:

* Գատըքէօյի ուսուցչական խնդրոյն առթիւ, իսկոն ժողովը ուրբաթ օրը՝ իր բացառիկ նիստին մէջ՝ երկարօրէն խորհրդակցեցաւ, որոշելու համար թէ տարեշրջանի վերջը երբ ուսուցիչ մը դադրեցուցուի պաշտօնէ, վարժարանաց Հոգաբարձութիւնները պարտաւոր են այս կարգադրութիւնը պատճառաբանել թէ ոչ: Ժողովն հուսկ ուրեմն այն եղրակացութեան եկաւ թէ Հոգաբարձուներն ազատ են տարւոյն վերջն յարմար դատուած փոփոխումն ընելու, պայմանաւ որ երբ ուսուցչի մը կողմէ բողոք ըլլայ, այդ պարագային Ուսումնական խորհուրդն իրաւունք ունենայ պատճառն հարցնելու և Հոգաբարձութիւնն

ալ պատասխանը հաղորդէ: Վարչութեան մտածումն այն է որ արգիւնաւոր ուսուցիչ մը մի' գուցէ Հոգաբարձութեան կամ Թաղ. խորհուրդի անդամի մը ազդեցութեամբ յանիրաւի հրաժարեցուցուի: Եթէ Հոգաբարձութիւն մը յայտարարէ թէ դատուի մը մեթոտէն, կամ ուղղութենէն, կամ բարքէն դժգոհ է, կամ պիւտճէի պատճառաւ ըրած է այդ փոփոխութիւնը, Վարչութիւնը պիտի հաւանի, որովհետեւ ատենց վրայ քննութիւն բանալ կը նշանակէ անվստահութիւն յայտնել Հոգաբարձութեան կամ Թաղ. խորհուրդին դէմ:

* Կեդր. վարժարանի խնամակալութեան անգամներէն Յ. Շահնազար և Լ. Սաաթճեան էֆ. ներս հրաժարած ըլլալով, իսկոն ժողովն ընդունեց և՛ որոշեց նոր ընտրութիւն յանձնարարել նոյն խնամակալութեան:

* Ուսումն. խորհուրդը վիճակացոյց մը պատրաստած է, որուն մէջ Կ'երեւայ Պոլսոյ 44 վարժարաններու 1910 յունիս 1ի վիճակը: Այդ վարժարաններուն մէջ կան 3437 մանչ և 3079 աղջիկ ուսանող: Զրիավարժներու թիւն է 2058. ուսուցիչներու՝ 166, ուսուցչուհիներու 153. գումար 319, որոնց ստացած թոշակներու համագումարն է 82332 դր., այոինքն միջին հաշիւով ամսական հազիւ 250 դր., իւրաքանչիւր ուսուցչի: Այս վարժարանաց ընդհ. հասոյթն է 100,518 դր., որուն 58,438 դր. ն կկեղեցւոյ անտուկներէն, 31173ր թոշակներէ, և 10809 դր. ը գանձանակէ են:

ԴԱՏԱԿԱՆ նախարարութիւնը քեզիքէրեով մը պաշտօնապէս Պատրիարքարան հաղորդած է իլմուխապէտներու մասին Պետական խորհուրդին տուած ծանօթ որոշումը:

* Մէկ քանի Պատրիարքարաններու գործակատարներ անցեալ շաբթու Դատական նախարարին ներկայանալով, իր ուշադրութիւնը հրաւիրեցին իլմուխապէտներու խնդրոյն առթիւ Պատրիարքարաններու և ժողովրդեան տրամադրութեանց վրայ: Պատրիարքարաններն այս խնդրոյն վրայ կը նային ո՛չ միայն իբր լոկ հասոյթի խնդիր.

այլ իրենց առանձնաշնորհմանց խնդիրը, ժառանգական և ճիւղահամարի խնդրոց մէջ, որոնցմէ անտեղեակ են բոլորովին մոլեխթարներէն շատերն և ժողովրդեան ալ մեծ վստահութիւն մը չեն ներշնչեր, մինչդեռ Պատրիարքարաններն ուշադրութիւն կ'ընծայեն եղած գործողութեանց և ունենէ զեղծում չի կրնար պատահիլ: Գործակաւ տարները յայտնեցին թէ Պատրիարքարանները պաշտօնական դիմում ալ պիտի ընեն: Նախարարը յանձն առաւ դիմումները հաղորդել Պետական Խորհուրդին, երբ ընդհանուր կերպով քննուի խնդիրը: Ինչպէս կը հասկցուի, այս խնդիրը Պետական Խորհրդոյ Ելմական ճիւղին մէջ որոշուած է, բայց ընդհանուր խորհրդակցութեան ալ պիտի ենթարկուի և հարկ է որ մինչև այն ատեն Ազգ. Պատրիարքարանը պատրաստէ և ներկայացնէ իր Թագաւորը, որ Պատրիարքարանի առանձնաշնորհմանց վրայ հիմնուած է:

ԿԻՒԿԻՈՅ ԹԵՄԵՐԷՆ հասած նամակներ տխուր և սրտաշարժ կը պատկերացնեն այն կողմերու վիճակը: Էքզիլէի ուսուցիչը չորս տարի առաջ փախեր է, իսկ երկու տարի առաջ տեղւոյն քահանայն Ատանայի զէպքին Գրքագիտնի մէջ նահատակուեր է: Այն ատեններէն ի վեր, ժողովուրդը առանց ուսուցչի և քահանայի մնացած, լատինացի է: Ս. Կաթողիկոսին դիմում եղեր է քանիցս, բայց Ն. Ս. Օծութիւնն այն աստիճան թշուառութիւններով չըջապատուած էր որ իրենց վրայ խորհիլ իսկ չէ կրցեր: Վերջերս Բիլիսէն երաժիշտ ուսուցիչ մը բերուեր է, և Ս. Կաթողիկոսէն խնդրուեր է դարձեալ որ քահանայ մը զրկէ: Այժմ հազիւ 40—50 տուն հայութիւն մը մնացած է այնտեղ, որ երբ դպրոցի համար դրամ ուղուի իրմէ, «կաթոլիկ կ'ըլլամ» կը պատասխանէ: Ասոնք չգիտեն իսկ թէ աղօթքն ի՞նչ է: Եւ իրենց սովորական են «նամոզա կիթտիւմ», նամազ գըլտըմ» բացատրութիւնները: Այդ տեղէն մէկ ժամ հեռու կայ Թէյէկ անուն գիւղ մը, ուրտեղի 25—30 տնոցոր հայութիւնը 20 տարիէ ի վեր լատինացած է, քահանայ չգտնուելուն համար: Ասոնք տրամադիր են եղեր Հայու-

թիւնն ընդունելու, եթէ քահանայ մը և վարժապետ մը ունենան: Կիրակիէ կիրակի էքզիլէն լատին քահանայ մը կ'երթայ կը պատարագէ նոյն գիւղը: Այս առթիւ կոչում կ'ըլլայ հայ հոգեւորականութեան, որ փոխանակ Պոլսոյ մէջ իր հանգիստին նայելու երթայ, և կորսուելու մօտ այս Հայութիւնը փրկէ:

* Նաճարլըն Պատրիարքարան կը հեռագրեն թէ տեղւոյն Գաբուշինեան Հայերը ամէն ջանք կ'ընեն դաւանափոխութեան հոսանք մը առաջ բերելու համար: Ուստի կը խնդրեն որ միջոց մը խորհուրդ գրելիլու պտոնց շահատակութիւնը: Ս. Պատրիարքն այս օրերս պիտի տեսակցի Ֆրանս. դեսպանին հետ:

ԽԱՐԲԵՐԴԷՆ կը հեռագրուի թէ Տ. Գէորգ Ծ. Վ. Ասլանեան մեկնած է նոյն քաղաքէն դէպ ի կ. Պոլիս:

ՕՐՄԱՆԵԱՆ Սրբազանի Բնիկ Յանձնաժողովը աւարտած է իր տեղեկագրին խմբագրութիւնը, զոր ստորագրած են բոլոր անդամները: Տեղեկաբեր կարգուած է Հմայեակ էֆ. Արամեանց, որ Երեսփ. Ժողովի առաջին նիստին պիտի ներկայացնէ տեղեկագիր մը, պատշաճ բացատրութիւնները տալով յանուն Յանձնաժողովին: Տեղեկագիրը բաժնուած է զանազան մասերու որոնցմէ ոմանց մէջ կ'արդարանայ Օրմանեան Սրբազան, և ոմանց մէջ ալ «մեղադրելի և ոչ դատապարտելի» կը հռչակուի: (Ժամանակ)

Տ. ԿՈՄԻՏԱՍ Վ., Բէօթահեայի էսկիչէհիլի և Պրուսայի մէջ եկեղեցական և ժողովրդական համերգներ տալէ ետքը, որոնք խորունկ սպաւորութիւն առաջ բերին, մայրաքաղաքս եկաւ անցեալ շաբթու, և անմիջապէս ձեռնարկեց նոյնպիսի համերգներու պատրաստութեան կ. Պոլսոյ մէջ ալ: Այս առթիւ զանազան թաղերու Դպրաց Դասերու անդամներ և երգիչներ կը լսենք թէ սիրով բոլորուած են նշաւոր երաժշտագէտին շուրջը, որ իր այդ համերգներով ամենամեծ դեր մը կոչուած է կատարեալ Հայ ժողովրդական զանազան դասակարգերուն երաժշտական ճաշկի սփռուացման և բարձրացման գործին մէջ: Կատարեալ յաջողութիւն կը մաղթենք իր օգտաշատ ձեռնարկին:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԻ ԴՆԻ նիստին մէջ կարդացուեցաւ Երուսաղէմի Պատր. տեղապահի խորհրդական Տ. Տրդատ եպիսկոպի մէկ հեռագիրը, որով կը ծանուցուէր թէ Պատրիարք Ամեն. Տ. Յարութիւն սրբազան որ հիւանդ էր սկիզբէն ի վեր, ամսոյս 2ին վիճակն աւելի ծանրացած է: Ժողովն որոշեց հեռագրել Տ. Տրդատ եպ.ի, որ ամէն ջանք ի գործ դնէ Ն. Սրբազնութեան ապաքինման համար, միանգամայն յանձնարարել որ Տնօրէն Ժողովոյ անդամոց միջոցաւ Ն. Սրբազնութեան գոյքերն ապահովութեան ներքեւ առնուին:—Ժողովն արձանագրեց Տ. Ղեւոնդ Վ. Մաքսուտեանի գրով մը և իր փոխանորդներուն՝ Աւետիս Սուրէնեան և Խնդիր Սիմոնեան էֆ. ներու միջոցաւ ըրած յայտարարութիւնը թէ Սիլիւրի Գափուի ագարակին յարակից 451 տէօնիւմ գետինը ազգին կը պատկանի, թէ այդ գետնին արժէքը չպիտի գանձէ, և թէ ազգին կամքին համաձայն բարեգործական Հաստատութեան մը պիտի յատկացնէ:—Ռոտտոյի գաւառ. վարչութեան տեղեկադրին ընթերցումէն ետքը, Ժողովը վաւերացուց Տ. Գէորգ Ծ. Վ. Ալանեանի նոյն քաղաքի առաջնորդութիւնը:—Արարկիրի Գաւառ. վարչութեան մէկ գրին վրայ, Ժողովը որոշեց առաջնորդական նոր ընտրութեան հրահանգ տալ:—Դատական նախարարը՝ Պատերազմական նախարարութեան զեկուցման վրայ՝ ծանուցած էր թէ պատշաճ դատուած է զինուորներու սօնական հինգ օրը տաանի բարձրացնել: Կրօն. Ժողովոյ յանձնուեցաւ պատրաստել այդ օրերու ցանկը:—Ժողովը հաստատեց Կեսարիոյ նորընտիր Քաղաք. Ժողովոյ և Չարսանճագի Գաւառ. Ժողովոյ պալատեալ անդամոց ընտրութիւնը:—Ազգ. Մատենադարանի յանձնաժողովը իր աշխատութիւնն աւարտելով տեղեկագիր ներկայացուցած էր կանոնագրի ծրագրով մը: Ժողովն ընդունեց մատենադարանի կազմութեան ընդհ. սկզբունքները, և որոշեց յանձնել Ուսումն. Խորհուրդին ուսումնասիրութեան համար, Հասոյթին գալով, որ հիմնուած են կտակաբաժիններու

վրայ, արժան դատեց Կտակաց Հոգաբարձութեան նկատառման յանձնել:—Ժողովը յարմար տեսաւ Տ. Փառէն Ծ. Վ. ր որբանոցներու ընդհանուր տեսչութեան կոչել, իր հոգեւոր կոչումովը գործունէութեան աւելի լայն ասպարէզ տալու համար անոր, նկատելով որ Չորք-Մարզուանի որբանոցի տեսչութեան պաշտօնը կրնայ աշխարհականի մը տրուել: Յանձնուեցաւ Որբախնամին:—Ժողովն զբաղեցաւ ուրիշ խնդիրներով ևս:

ԿՐՍՆ. ԺՈՂՈՎԷՂ գումարուեցաւ ԴՆ. օրը.—Սամաթիոյ Դպրաց Դասու Տնօրէն Խորհուրդը 18 դպիրներու ձեռնադրութեան արտօնութիւնը խնդրած էր: Ժողովը որոշեց անոնց ծննդեան վկայականներն ևս ուղել, միեւնոյն ատեն դարձեալ որոշելով որ երբ Դպրաց Դասերը դպիրացուները ներկայացնեն անոնց խարի վարուց և ծննդեան վկայականներն ալ միասին բերեն:—Չարսանճագի Կրօն. Ժողովն ևս եկեղեց. բարեկարգութեան վրայ առաջարկութիւններ ներկայացուցած ըլլալով՝ Ժողովը որոշեց յառաջիկայ համագումարին նկատողութեան յանձնել:—Ժողովը Տ. Գարեգին քհն. Արծրունիի՝ իր ձեռնադրուած Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ պաշտօնավարելու խնդիրը վերստին քննելով, մեծամասնութեամբ որոշեց որ յիշեալ քահանան արտօնուի իր օծուած եկեղեցիին մէջ պաշտօնավարել, և սոյն որոշումը հաղորդուի թաղ. Խորհրդոյ՝ միանգամայն հարկ դատեց գրել Քարոզիչ Սրբազանին և յանձնարարել Գահանայից Դասուն որ եղբայրական ոգւով և սիրաշահութեամբ ընդունին զայն և իրկեն զինքը անել կացութենէ մը:—Ժողովը նկատի առնելով Ռոտտոյի Տ. Գարեգին քհն. Երամեանի աւագերէցութեան խնդիրը, որոշեց նորընտիր առաջնորդին կարգադրութեան յանձնել զայն:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀԱՄԱՅՆԱԿ ԳԶՆԵ. ԷՔՍԷԻՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՉԱՐՄԱՅԵՐ ԳԶՆԵ. ԿԷՋԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

Չախմաճըյաւ, Յակոբեան խան

THE
JOURNAL
OF
THE
AMERICAN
MEDICAL ASSOCIATION
PUBLISHED WEEKLY
CHICAGO, ILL., U.S.A.

Subscription price, Five Dollars Per Annum in Advance.
Single Copies, Fifteen Cents.
Entered as Second-Class Matter, May 2, 1882.
Postage paid at Chicago, Ill., May 2, 1882.
Acceptance for mailing at special rate of postage provided for in
Act of October 3, 1917, authorized on July 10, 1918.
Postage paid by the publisher.

Copyright, 1918, by American Medical Association
Printed at the Chicago Press and Publishing Co., Chicago, Ill.
No. 535 North Dearborn Street, Chicago, Ill.

Published by the American Medical Association, 535 North Dearborn Street,
Chicago, Ill., U.S.A.

Subscription price, Five Dollars Per Annum in Advance.
Single Copies, Fifteen Cents.

Entered as Second-Class Matter, May 2, 1882.
Postage paid at Chicago, Ill., May 2, 1882.

Acceptance for mailing at special rate of postage provided for in
Act of October 3, 1917, authorized on July 10, 1918.

Postage paid by the publisher.

Copyright, 1918, by American Medical Association

Printed at the Chicago Press and Publishing Co., Chicago, Ill.

No. 535 North Dearborn Street, Chicago, Ill.

Published by the American Medical Association, 535 North Dearborn Street,
Chicago, Ill., U.S.A.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԵԼԵՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ . — ԿՐՈՆԻ Դա-
սեր, Քրիստոնեական եկեղեցւոյ վարդապե-
տութիւնը: Գին 5 ղրշ.:

ՆՈՅՆ . — ԿՐՈՆԻ դասեր, Քրիստոնեական
բարոյականը: Գին 5 ղրշ.:

Տաղանդաւոր հեղինակը, երկրորդական
վարժարաններու և բարձրագոյն կարգերու
համար ֆրանս. լաւագոյն հեղինակներու
հետեւողութեամբ, և Հայ եկեղեցւոյ վար-
դապետութեանց համաձայն պատրաստած
է այս երկու հատոր դասագիրքերը կրօ-
նական և բարոյական ուսմանց, որոնք ի-
րենց ամփոփ ձեւին տակ այնքան լաւ կեր-
պով կը խտացնեն քրիստոնէական բարոյա-
կանը և եկեղեցական վարդապետութիւն-
ները, ցարդ հրատարակուած դասագիրքե-
րուն մէջ լաւագոյն տեղը գրաւելով:
Ջերմապէս կը յանձնարարուի կրթական
վարիչներուն: Երկու գործերն ալ վաւե-
րացած են Ազգ. Կեդր. Վարչութեան
Կրօն. Ժողովէն:

ՍՐԱՄ ԱՆՏՈՆԵԱՆ . — Գանձարան, ըն-
թերցանութեան գիրք, տարրական դա-
սընթացք, 5 ղրշ.:

Նոյն, միջին դասընթացք, Գ. տպա-
գրութիւն, 8 ղրշ.:

Ծանօթ գրող Արամ էֆ. Անտոնեանի
սոյն ընթերցանութեան գիրքերը, ճաշա-
կաւոր և գիտակից ընտրութեամբ եղած
քաղուածներ՝ Հայ և օտար լաւագոյն հե-
ղինակներէ, կը յանձնարարուին դպրոցա-
կան վարիչներուն, իրենց մաքուր տպա-
գրութեամբ (Օ. Արդուման) և այն մեթո-
տիկ ուղղութեամբ որ Գանձարանի առանձ-
նայատուկ առաւելութիւնն եղած է, և
ապահոված է անոր յաջողութիւնը: 5—3

ՏԻՔ. Ն. ՏԱՂԱԽԱՐԵԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

ՈՒՐՈՒԱԳԻԾ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ,
ի սկզբանէ մինչ ցԱռշակունի Հարսութեան:
Բ. Տպագր. Վենետիկ: Գին 5 ղրշ.:

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԿՐՕՆԵՐԸ, Բ. Տպագր.
Կ. Պոլիս. — Գին 6 ղրշ.:

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԽՍՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ
ԲՆԱԽՍՈՒԹԻՒՆ . — Ազգ. վարժարանի
համար պատրաստուած դասագիրք մը: 128
էջ, 55 կազմախօսական ընտիր պատկերներ:
Գին 5 ղրշ.:

Յ. Գ. ՄՐՄԸՐԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ

Գ Ո Ր Ծ Ե Ր Է Ն

Աշխուիս, տաճնակ խմատասիրական,
7 ղրշ.:

Հին Օրեր և Պուէտ Խաչատուր Մի-
սաքեան, գին 7ու կէս ղրշ.:

Ստեփ. Կին դէմքերու, տաճնակ.
գին 5 ղրշ.:

Թրփահայ հին վաճառականութիւն եւ
վաճառականի, գին 10 ղրշ.:

19րդ դար, Յովհ. Պրուսի Տերոյենց,
գին 12ու կէս ղրշ.:

Պատմութիւն Հայ Գրականութեան՝ սկիզ-
բէն մինչեւ ճորդ դար (Յ. Բ.)՝ ի պէտս
բանասիրաց և բարձր. ուսանողաց. գին
7 ղրշ.:

Յ. Գ. Մրմրեանի այս գործերը՝ կը
ծախուին Պոլիսի բոլոր գրավաճառներուն
քով, մեծաքանակ (100ի չափ) ԿԱՆԽԻԿ
գնողներու կ'ըլլայ մեծկակ զեղչ. գրել հե-
ղինակին հասցէին, Կ. Պոլիս Զաքարիա-
լար, Գլըճեան գրատուն, կամ Մեծ Նոր
խան, վերնայարկ թիւ 53 սենեակը, Բշ.,
Եշ. և Շք. օրերը ժամը 3—9 (Ը. Թ.):

ՀՄԱՅԵԱԿ ԲԱՀԱՆԱՅ ԷՄԻՐՃԵԱՆ
ՏԱՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

Ա. Բ. Գ. հատոր

30 ղեղչ

Կեդրոնատեղի՝ Սիւմպիւլլի խան Փափազ-
եան գրատուն:

